ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2-19

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան «27» 01 2015 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ -ը, ի դեմս տնօրեն՝ Արմեն Սաղաթելյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 99085,8 հազար ՀՀ դրամ (իննսունինը միլիոն ութսունհինգ հազար ութ հարյուր ՀՀ դրամ) գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվամ՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե

ա. Կազմակերպությանը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.2.4 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը,

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.8. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ,

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները, ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 99085,8 հազար ՀՀ դրամ (իննսունինը միլիոն ութսունհինգ հազար ութ հարյուր ՀՀ դրամ):

(թվերով և բառերով)

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքները համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև 91 158 936 ՀՀ դրամ (իննսունմեկ միլիոն հարյուր հիսունութ հարյուր ինը հարյուր երեսունվեց ՀՀ դրամ), որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս. 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն պայմանագրով նախատեսված գամարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի աճի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ

դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

ա. Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված գիտական ծրագրի հայտը,

բ. Առաջադրանքը (հավելված 1),

գ. Օրացուցային պլանը (հավելված 2),

դ. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3),

ե. Գիտական ծրագրի նախահաշիվը (հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա	ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ
	ք. Երևան, Աբովյան 68
Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100	Անելիք բանկ Կենտրոնական մ/ճ
ՀՎՀՀ 00005673	Հ/հ 11805100241800
	ՀՎՀՀ 01506627
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան	Տնօրեն՝ Ա.Սաղաթելյան
(ստորագրություն)	(ստորագրության)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1

«27» 01 2015թ.
N 2-19 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. **Աշխատանքի կատարման հիմքը՝** Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե

2.Աշխատանքի նպատակը.

Ծրագրով նախատեսված հետազոտությունները միավորվում են նոր միջառարկայական ուղղության շրջանակներում, որը կոչվում է երկրաբնապահպանություն (գեոէկոլոգիա): Ուղղության հիմնական խնդիրն է՝ կիրառելով տարբեր առարկաների հասկացական ապարատը և հետազոտությունների եղանակը, ապահովել գործնականում էկոլոգիական անվտանգությունը, ստեղծել վտանգների կանխորոշման մեթոդաբանություն, մշակել տեխնածին գործընթացներից առաջացող վնասի նվազեցման տեխնոլոգիաներ և միջոցառումներ, ի հայտ բերել ռիսկի խմբեր, վեր հանել քիմիական տարրերի խտությունների բնական հավասարակշռության խախտման պատճառները ու գտնել նրանց կառավարման եղանակները և այլն:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (1 էջի սահմաններում)

Ծրագրով նախատեսված հետազոտությունները միավորվում են նոր միջառարկայական ուղղության շրջանակներում, որը կոչվում է երկրաբնապահպանություն (գեոէկոլոգիա): Ուղղության հիմնական խնդիրն է՝ կիրառելով տարբեր առարկաների հասկացական ապարատը և հետազոտությունների եղանակը, ապահովել գործնականում էկոլոգիական անվտանգությունը, ստեղծել վտանգների կանխորոշման մեթոդաբանություն, մշակել տեխնածին գործընթացներից առաջացող վնասի նվազեցման տեխնոլոգիաներ և միջոցառումներ, ի հայտ բերել ռիսկի խմբեր, վեր հանել քիմիական տարրերի խտությունների բնական հավասարակշռության խախտման պատ-ճառ-ները ու գտնել նրանց կառավարման եղանակները և այլն:

Հետազոտություններն ընդգրկում են դաշտային աշխատանքներ, նմուշների մշակում, ստացված տվյալների վերլուծություն: Ծրագրով նախատեսված հետազոտությունների ընթացքում կկիրառվեն զանազան հմտություններ (no-how), դաշտային էքսպ¬րես անալիզի սարքավորումներ, տարածակողմնորոշող թվային տեխնիկա և քարտեզներ, տիեզերական լուսանկարներ, էքսպերտային դասի գերճշգրիտ տարրալուծման սարքեր, GIS տեխնոլոգիաներ և համակարգչային մոդելավորում:

Հետազոտությունների գիտամեթոդական հենքն է հանդիսանում գեոէկոլոգիական սկզբունքը, երբ բոլոր տվյալները տարածաժամանակային կապ են ստանում: Օգտագործելով տարածքը որպես օբյեկտիվիզացնող գործոն հնարավոր է դառնում համադրել տարբեր, առաջին հայացքից իրար հետ առնչություն չունեցող տվյալները, օրինակ՝ թույլ երկրաշարժերը ու քաղցկեղի զարգացումը, ծանր մետաղներով հողերի աղտոտվածությունը և պերինատալ մահացությունը և այլն: Շնորհիվ նորագույն տեխնոլոգիաների կիրառմանը, հնարավորը է դառնում իրականացնել խորը, մանրակրկիտ ուսումնասիրություններ՝ ի հայտ բերելով մինչ օրս անհայտ երևույթներ և ռիսկի գործոններ, ինչի շնորհիվ կարելի է մշակել կանխարգելիչ և վնասը նվազեցնող միջոցառումներ:

Հետազոտությունների իրականացումը ապահովված է Էկոկենտրոնի հմուտ և բարձրորակ անձնակազմով: Գիտական և ինժիներատեխնիկական անձնակազմի 59 անդամներից 3-ը գիտ. դոկտորներ են և 19-ը՝ գիտ. թեկնածուներ, ընդհանուրից շուրջ 60 տոկոսը մինչև 35 տարեկան երիտասարդ գիտնականներ են: Գիտական անձնակազմի մի մասը հատուկ մասնագիտական

վերապատրաստում է անցել Բելգիայի, Նորվեգիայի, ՌԴ-ի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Իռլանդիայի, Շվեյցարիայի, Իտալիայի առաջատար գիտական կենտրոններում և տարբեր միջազգային դասընթացներում:

Նշված հետազոտությունների իրականացման համար գերկարևոր է, որ կատարողները տիրապետում են տարբեր գիտությունների գիտելիքներին՝ համախմբված աշխատում են կենսաբանները, երկրաբանները, քիմիկոսները, աշխարհագետները, գյուղատնտեսները, մաթեմատիկոսները և համակարգչային մասնագետները, որոնց միաբանությունը հետազոտությունների հաջողության հիմնական գրավականն է:

Շնորհիվ իրականացված բազմաթիվ դրամաշնորհների և պայմանագրային աշխատանքների՝ էկոկենտրոնն ապահովված է դաշտային աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ամենագնաց ավտոմեքենաներով, տեղափոխելի ժամանակակից անալիտիկ սարքերով և դաշտային պարագաներով: Կենտրոնի կազմում գործում է ՀՀ Արդյունաբերության նախարարության կողմից արտոնագրված Անալիտիկ փորձարարական լաբորատորիան, որը համալրված է թանկարժեք էքսպերտային դասի տարրալուծման սարքավորումներով:

4. Աշխատանքի բովանդակությունը (3 էջի սահմաններում)

Ներկայումս բնական միջավայրի աղտոտման և դեգրադացման ու դրանցից բխող հասարակության զարգացման համար կարևոր հիմնահարցերը ստացել են գերարդիական նշանակություն: Բնական պաշարների ոչ հաշվենկատ օգտագործման և քաղաքակենտրոնացման գործընթացների ընդլայնման հետևանքով բնական միջավայրի դեգրադացիան ուղղակի ազդեցություն է թողնում մարդու առողջության ու կյանքի որակի վրա և կարող է ունենալ այնպիսի հետևանքներ, ինչպիսիք են սոցիալական լարվածությունը, տնտեսական ճգնաժամը և քաղաքական անկայունությունը: Այս պարագայում առաջնահերթ է դառնում էկոլոգիական անվտանգության ապահովումը, որի երաշխիքն է հանդիսանում կայուն զարգացման սկզբունքների պահպանումը հասարակության զարգացման գործընթացում: Վերջինիս կարևորագույն պայմաններից է շրջակա միջավայրի (այսուհետ՝ ՇՄ) վրա անթրոպոգեն ազդեցության մակարդակի և տնտեսական աճի միջև եղած ուղիղ կապի հնարավոր թուլացումը:

Էկոլոգիական անվտանգության հետազոտման օբյեկտ է հանդիսանում կենսոլորտը, որի պահպանությունը և նրանում գործընթացների անխախտելիությունը կյանքի բոլոր ձևերի, այդ թվում հասարակության գոյության գրավականն է: Անթրոպոգեն գործունեության ընթացքում առաջնային են դառնում կենսոլորտի կառուցվածքի ու ռեժիմի խախտումից բխող հիմնահարցերը: Տեխնածին գործընթացների արդյունքում ռիսկի են ենթարկվում բոլոր բնական և անթրոպոգեն էկոհամակարգերը: Ընդ որում, փոխվում են կենսածին և աղտոտիչ տարրերի հաշվեկշիռները:

Ծրագրով նախատեսված հետազոտություններն ուղղված են տարածքի էկոլոգիական իրավիճակի համալիր գնահատմանը, ռիսկի գործոնների բացահայտմանը, էկոլոգիական փորձաքննության գիտամեթոդական հիմունքների մշակմանը, մարդու էկոլոգիային առնչվող խնդիրների լուծմանը և բնական ռեսուրսների կառավարման գործընթացների բարեփոխմանը: Հետազոտությունների իրականացման համար կօգտագործվեն GIS տեխնոլոգիաներ, տիեզերական բազմասպեկտրալ զանազան լուսաչափի նկարներ, կկատարվեն թեմատիկ թվային քարտեզների մշակում, ինչպես նաև նմուշների տարրալուծման ISO պահանջներին բավարարող սարքավորումներ և մեթոդներ, համակարգչային մոդելավորման ծրագրեր:

Այս հետազոտությունները ունեն ոչ միայն հիմնարար, այլ նաև կիրառական նշանակություն, քանի որ անմիջականորեն առնչվում են ազգաբնակչության անվտանգության և հասարակության կայուն զարգացման խնդիրների հետ:

2015թ.-ին ծրագրով նախատեսած է շարունակել երկրաբնապահպանական և էկոլոգիական անվտանգության հիմնահարցերին ուղղված հետազոտությունները: Աշխատանքները և ակնկալվող արդյունքները բերված են ստորև՝ ըստ առանձին ստորաբաժանումների.

1. Շրջակա միջավայրի երկրաքիմիայի բաժին. Հետազոտությունները կենտրոնացված են ՇՄ-ում քիմիական տարրերի բնական հավասարակշռության անթրոպոգեն խախտումների և դրանց հետևանքների հե-

տազոտմանը: Հետազոտությունների հիմնական առանցքը ուղղված է աղտոտման տարածքային տեղաբաշխման առանձնահատկությունների, դրա հետ կապված ռիսկի գործոնների բացահայտմանը, էկոլոգիական տեսանկյունից դիսկոմֆորտ գոտիների շրջագծմանը, ազգաբնակչության շրջանում ռիսկի խմբերի առանձնացմանը, աղտոտիչների ազդեցության, որոշակի հիվանդությունների և ընդհանուր հիվանդացության մակարդակների հետ ունեցած կապերի բացահայտմանը: Նշված հետազոտություններում կարևորվելու են գիտական նորագույն տեխնոլոգիաները և միջազգային մեթոդների տեղայնացումը:

Նախատեսվում է շարունակել քիմիական տարրերի տեխնածին երկրաքիմիական հոսքերի, ՇՄ-ի տարբեր բաղադրիչներում քիմիական տարրերի երկրաքիմիական ասոցիացիաների, դրանց որակական և քանակական փոփոխությունների առանձնահատկությունների հետազոտումը: Մասնավորապես նախատեսվում է՝

- ՀՀ տարբեր շրջաններում հող-օդ-ջուր-բույս համակարգում ծանր մետաղների վարքի առանձնահատկությունների բացահայտում,
- տեղեկատվական բազայի համադրությունը տարբեր՝ էկոլոգիական, սննդի անվտանգության, բժշկակենսաբանական և այլ ոլորտների տեղեկատվության հետ:
- Հրազդան գետ ջրի որակի ուսումնասիրում:
- Երևան ք.-ի տարածքի ծանր մետաղներով աղտոտման ռիսկի գնահատում՝ ՀՀ և միջազգային մեթոդներով: Տարածքի շրջանացում՝ ըստ աղտոտման մակարդակների և էկոլոգիական ռիսկի, բնակչության ռիսկի խմբերի առանձնացում:
- Երևան ք.-ում բացահայտված աղտոտված մանկապարտեզների տարածքների մանրամասն հետազոտում և ռիսկի նվազման միջոցառումների մշակում:
- Միջազգային մեթոդների տեղայնացում էկոլոգաերկրաքիմիական հետազոտություններում, ստանդարտավորում և համապատասխան Ստանդարտ Օպերացիոն Ընթացակարգերի (ՍՕՀ) մշակում:

2. Կենսաքիմիայի բաժին. Ֆունկցիոնալ կանաչապատման գիտամեթոդական հիմունքների մշակում: Քաղաքների կանաչապատ տարածքների էկոլոգիական մոնիթորինգ- Քաղաքների բնակչության առողջության և անվտանգության կարևոր գործոն է հանդիսանում կանաչապատ տարածքների առկայությունը: Վերջիններս ՀՀ քաղաքներում խիստ կրճատվել են, վատթարացել է բույսերի վիճակը: Բույսերի և տնկարկների էկոլոգիական կայունության բարձրացման նպատակով անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել կանաչ տարածքների կենսաերկրաքիմիական մոնիթորինգ և բույսերի վիճակի գնահատում:

Նախատեսվում է շարունակել Երևան ք.-ի կանաչապատման համակարգի բույսերի վիճակի և էկոլոգիական կայունության մոնիթորինգային հետազոտությունները: Ուսումնասիրվելու են ծառատեսակների մետաղակլանիչ հատկությունները և փոշեկայունությունը, նյութափոխանակության առանձնահատկությունները քաղաքային պայմաններում: Կատարվելու է տվյալների համեմատական վերլուծություն նախորդ տարիներին ստացված տվյալների հետ՝ հետազոտվող տարածքների համար էկոլոգիապես կայուն բույսերի տեսակների հայտնաբերման նպատակով: Քաղաքակենտրոնացված տարածքներում աճեցվող բուսական ծագման սննդամթերքի էկոլոգիական անվտանգության գնահատում- Քաղաքակենտրոնացված տարածքներում աճեցվող բուսական ծագման սննդամթերքը գտնվում է հզոր տեխնածին ազդեցության տակ, սակայն ելնելով ծանր սոցիալ տնտեսական իրավիճակից բնակչության զգալի մասը շարունակում է մշակել աղտոտված հողերը և օգտվել այդտեղ աճեցվող պտուղ-բանջարեղենից: Վերջինները հաճախ պարունակում են մեծ քանակությամբ տարբեր վնասակար նյութեր, որոնք կարող են բնակչության առողջությանը սպառնացող ռիսկի գործոն հանդիսանալ: Շարունակվելու են քաղաքակետնրոն տարածքներում աճեցվող պտուղ-բանջարեղենի էկոլոգիական անվտանգության ուղղությամբ հետազոտությունները: Ուսումնասիրվելու է պտուղ-բանջարեղենի աղտոտվածությունը քիմիական աղտոտիչներով՝ ծանր մետաղներով, հալոգենների և ազոտի միացություններով, պեստիցիդներով: Հետազոտվելու է ինչպես գյուղատնտեսական բույսերի տեսակների վնասակար նյութեր կլանելու

առանձնահատկությունները և աղտոտման մակարդակը, այնպես էլ տոքսիկանտների ազդեցությունը բույսերի աճի, զարգացման և բերքատվության վրա:

4. Կենսաէներգետիկայի և կերերի որակի բաժին- Բնական կերահանդակների պահպանությունն ու արտադրողականության բարձրացումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն, քանի որ դրանք ծառայում են որպես հիմնական կերային բազա, որից մեծապես կախված է անասնապահական մթերքների արտադրության աճը: Կապված կերային ռեսուրսների անբավարար քանակի ու ցածր որակի հետ՝ կովերի միջին կաթնատվությունը չի գերազանցում 1800 լ, որը զգալիորեն ցածր է ՀՀ-ում բուծվող Կովկասյան գորշ ցեղատեսակի պոտենցիալ հնարավորությունից: Կերահանդակների ուսումնասիրությունը կարևոր է նաև նրանով, որ դրանք զբաղեցնում են հանրապետության ամենաընդարձակ տարածքները (41%) և գտնվում են խիստ անբարենպաստ էկոլոգիական վիճակում՝ հողերի մեծ մասը էրոզացված է և դեգրադացված, ցածր է բարձրարժեք կերաբույսերի տեսակարար կշիռը և այլն: Հատկապես վատ վիճակում են գտնվում ցածրադիր գոտու արոտները, որոնք ամենուրեք ենթարկվում են առավել ինտենսիվ արածեցման: Դրանց բարելավման հիմքում պետք է դրվեն մի շարք կարևոր կենսաբանական և էկոլոգիական չափորոշիչներ, որոնց ուսումնասիրությունը նախատեսվում է իրականացնել սույն թեմայի շրջանակներում:

Նախատեսվում է իրականացնել դաշտային և լաբորատոր հետազոտություններ՝ արոտների առաջնային արդյունավետության, կալորիականության, բուսածածկի կազմի, կերերի սննդային արժեքի, հողում, բույսերում և լիզիմետրիկ ջրերում մակրո- և միկրոտարրերի պարունակության որոշման, ինչպես նաև ընտրել բարձրարժեք հացազգի և ընդեղեն կերաբույսեր՝ բուսածածկի բարելավման նպատակով:

Ակնկալվող արդյունքները. Հետազոտությունները հիմք կհանդիսանան հետագայում մշակելու կոմպլեքս միջոցառումներ՝ բնական արոտների արդյունավետության բարձրացման, բարձր էներգիայով օժտված կերաբույսերի տեսակարար կշռի ավելացման և կերահանդակների էկոլոգիական վիճակի բարելավման նպատակով:

5. Սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվավերլուծական կենտրոն. Ստորաբաժանումը իրականացնում է ռիսկի վերլուծության միջազգային շրջանակով նախատեսված գիտահետազոտական, մեթոդաբանական և փորձագիտական աշխատանքներ, ինչը հիմք կհանդիսանա ՀՀ-ում միջազգային չափորոշիչների համապատասխան սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողություն իրականացնելու համար: Ռիսկի գնահատումը հանդիսանում է խիստ արդիական ուղղություն ողջ աշխարհում, քանի որ առանց գիտական անկախ գնահատականի հնարավոր չէ պատշաճ կառավարում և որոշումների ընդունում: Հաշվի անելով, որ ոլորտը դեռևս նոր է ներդրվում և կայացման փուլում է՝ աշխատանքները պետք է ուղղվեն ինչպես միջազգային չափորոշիչների և ստանդարտների ներդրմանը, այնպես էլ ռիսկի գնահատման համար անհրաժեշտ բաղադրիչների և կիրառական աշխատանքների ապահովմանը՝ պատշաճ ռիսկի գնահատում իրականացնելու համար:

Աշխատանքներն իրականացվելու են հետևյալ հիմնական ուղղություններով.

- Երևանի ազգաբնակչության ռիսկի և էքսպոզիցիայի գնահատումը՝ բուսական ծագման մթերքներում քիմիական ծագման թունանյութերի մնացորդներից: Իրականցվելու են համալիր աշխատանքներ մթերքների սպառման տվյալների բազայի ստեղծման և ռիսկի մատրիցաների համալիր հետազոտման ուղղությամբ:
- Երևանի շուկաների ռիսկի գնահատում և կենդանական ծագման հումքի մթերի իրացման պայմանների ռիսկի գնահատում:
- Լեռնահանքային շրջաններում աճեցված պտուղ բանջարեղենի ռիսկի գնահատում:
- Պարենամթերքի կեղծումների ռիսկի գնահատում: Աշխատանքներն ուղղվելու են հայտնաբերմանը և պատշաճ վերահսկողության մեխանիզմների մշակմանը:

Վերջինների շնորհիվ հնարավոր է իրականացնել, գիտական մեթոդների մշակմամբ և կիրառմամբ, վտանգների վաղ հայտնաբերում, էքսպոզիցիայի գնահատում, ռիսկի բնութագրում:

6. ԱՏՀ և հեռազննման տեխնոլոգիաների բաժինը. ՀՀ տարածքում լեռնային լանդշաֆտային գոտիները ուրույն տնտեսական ռեսուրսային բազաներ են հանդիսանում և վերջիններիս անխնա և անկառավարելի յուրացումը խնդիրների շարունակական շարք է ձևավորում: Բաժինը ունի իր ներդրումը՝ լեռնային

լանդշաֆտների պլանավորման և էկոլոգիական կայունության գնահատման գիտականորեն հիմնավորված մեթոդական ապարատի ձևավորման և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ: Ուստի, ժամանակակից հեռազննման և աշխարհագրական տեղեկատվական (ԱՏՀ) տեխնոլոգիաների կիրառմամբ լանդշաֆտների էկոլոգիական իրավիճակի մոնիթորինգային համակարգի ձևավորման անհրաժեշտությունից ելնելով նախատեսում է շարունակել լանդշաֆտային պլանավորման և լանդշաֆտային կայունության գնահատման գիտամեթոդական հիմունքների մշակման և շրջակա միջավայրի աղտոտման հեռազննման մոնիթորինգային համակարգի ստեղծման ուղղությամբ աշխատանքները:

Այդ նպատակով նախատեսվում է՝

- շարունակել լանդշաֆտային առանձին բաղադրիչների (հող, բույս) աղտոտման գնահատման հեռազննման մեթոդների մշակման աշխատանքները:
- շարունակել էկոլոգիական նշանակության տարածական տեղեկատվության պահպանման և կառավարման ստանդարտավորված և տեխնոլոգիապես կատարելագործված համակարգի մշակմանն ու ներդրմանն ուղղված աշխատանքները:
- մշակել լեռնային արոտավայրերի էներգետիկ կալորիականության գնահատման հեռազննման մեթոդների համակարգ
- մշակել էրոզիոն պրոցեսների ձևավորման, զարգացման և վտանգավորության աստիճանի գնահատման հեռազննման մեթոդների համակարգ:
- մշակել էկոլոգիական նշանակության տեղեկատվության (հողօգտագործման տվյալներ, հողային քարտեզներ և այլն) միջազգային ստանդարտավորման գիտամեթոդական համակարգ:

5. Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը . հաշվետվությունների և հրատարակված աշխատանքներ

Տնօրեն _____ (Արմեն Սաղաթելյան)

(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված 2

«27» 01 2015 թ.
N 2-19 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

«Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ»
(ծրագրի անվանումը)

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
I	Շրջակա միջավայրի երկրաքիմիական հետազոտություններ ՀՀ տարբեր շրջաններում	Նախատեսվում է շարունակել քիմիական տարրերի տեխնածին երկրաքիմիական հոսքերի, ՇՄ-ի տարբեր բաղադրիչներում քիմիական տարրերի երկրաքիմիական ասոցիացիաների, դրանց որակական և քանակական փոփոխությունների առանձնահատկությունների հետազոտումը:	I.1. տարբեր համակարգերում (հող-օդ-փոշի-ջուր-բույս) ծանր մետաղների վարքի առանձնահատկությունների բացահայտում:	I.1.Ամփոփված և համադրված տվյալներ, հոդված	31.03.15	27819071
			I.2. Միջազգային մեթոդների տեղայնացում էկոլոգաերկրաքիմիական հետազոտություններում, ստանդարտավորում և համապատասխան Ստանդարտ Օպերացիոն Ընթացակարգերի (ՍՕՀ) մշակում: I.3. Երևան ք.-ի տարածքի ծանր մետաղներով աղտոտման ռիսկի գնահատում՝ ՀՀ և միջազգային մեթոդներով: Տարածքի շրջանացում՝ ըստ աղտոտման մակարդակների և էկոլոգիական ռիսկի, բնակչության ռիսկի խմբերի առանձնացում:	I.2. Մշակված և հաստատված ՍՕՀ-երի առկայություն I.3. Գնահատված ռիսկ, քարտեզների և հոդվածների առկայություն	30.06.15	
			I. 4. Հրազդան գետ ջրի որակի սեզոնային ուսումնասիրում I.5. Երևան ք.-ում բացահայտված աղտոտված մանկապարտեզների տարածքների մանրամասն հետազոտում և ռիսկի նվազման միջոցառումների մշակում:	I.4. իրականացված դաշտային աշխատանքներ և տարրալուծման մշակված արդյունքներ I.5. Նմուշների և արդյունքների, քարտեզների, սխեմաների առկայություն	30.09.15	
			I.6.Տվյալների ամփոփում,մշակում, հոդվածների պատրաստում, հաշվետվությունների կազմում	I. 6. հաշվետվության և հոդվածների առկայություն:	31.12.15	

II	Բնական կերահանդակների կենսաբանական արդյունավետության, էներգետիկ և սննդային արժեքի ուսումնասիրությունը՝ դրանց բարելավման միջոցառումների մշակման նպատակով	Նախատեսված է ուսումնասիրել Արագած լեռան ցածրադիր գոտու արոտների արդի վիճակը՝ դրանց էկոլոգիական և ագրոնոմիական պոտենցիալի հետագա բարձրացման նպատակով: Մասնավորապես, կիրականացվեն մեծ ծավալի դաշտային և լաբորատոր հետազոտություններ նվիրված՝ արոտների առաջնային արդյունավետության, կալորիականության, բուսածածկի կազմի, կերերի սննդային արժեքի, հողում և բույսերում մակրո- և միկրոտարրերի պարունակության գնահատմանը:	II.1.Հավաքագրել տվյալ թեմատիկայի ուղղությամբ միջազգային գրականության մեջ առկա գիտական նյութեր՝ օգտվելով նաև “Springer” հրատարակչության բազմաբանակ գիտական հրապարակումներից: Ձեռք բերել դաշտային և լաբորատոր հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ պարագաներ:	II.1.Միջազգային գրականության տվյալների բազա և դաշտային հետազոտությունների համար անհրաժեշտ պարագաներ:	31.03.15	21144799
			II.2.Հավաքագրել անհատական բույսերի, հիմնական բուսախմբերի, արոտների բուսածածկի և հողի արմատաբնակ շերտի նմուշներ: Կատարել դրանց նախնական մշակում՝ քիմիական տարալուծման նպատակով:	II.2.Ցածրադիր արոտներից հավաքագրված և նախնական մշակման ենթարկված բազմաբանակ բուսական և հողային նմուշների հավաքածու:	30.06.15	
			II.3Որոշել կերաբույսերի կալորիականությունը, հում պրոտեինի, ճարպի, թաղանթանյութի քանակությունը ու հողերում և բույսերում մի շարք մակրո- և միկրոտարրերի պարունակությունը:	II.3.Նմուշների կենսաէներգետիկ և սննդային աժեքի, քիմիական կազմի վերաբերյալ տվյալների բազա:	30.09.15	
			II.4Մտացված դաշտային և լաբորատոր փորձնական նյութի ամփոփում, վերլուծություն, հաշվետվության ձևակերպում և հոդվածների նախապատրաստում:	II.4.Կարճ և ամփոփիչ հաշվետվություններ, տպագրության համար պատրաստի հոդվածներ:	31.12.15	
III	Ֆունկցիոնալ կանաչապատման գիտամեթոդական հիմունքների մշա-կում: Քաղաքների կանաչապատ տարածքների էկոլոգիական մոնիթորինգ	Քաղաքների բնակչության առողջության և անվտանգության կարևոր գործոն է հանդիսանում կանաչապատ տարածքների առկայությունը: Վերջիններս ՀՀ քաղաքներում խիստ կրճատվել են, վատթարացել է բույսերի վիճակը: Բույսերի և տնկարկների էկոլոգիական կա-յունության բարձրացման նպա-տակով անհրաժեշտ է պար-բերաբար իրականացնել կանաչ	III.1.Իրականացնել նախորդ տարիներին ստացված տվյալների համեմատական վերլուծություն, համալրել տվյալների բազան, նախապատրաստվել դաշտային աշխատանքներին:	III.1. Տվյալների բազայի հա-մալրում, 2015 թ-ին հետազոտվող տարածքների ընտրություն, տպագրու-թյան համար նախատեսված գիտական հոդվածի ձևակերպում:	31.03.15	4554250
			III.2.Շարունակել Երևանի կանաչապատման համակարգի բույսերի վիճակի և էկոլոգիական կայունության մոնիթորինգային հետազոտությունները: Նախապես ընտրված տեղամասերում իրականացնել դաշտային աշխատանքներ՝	III.2. Հետազոտվող տեղա-մասի բույսերի տեսականու ընտրություն և նշված տեսակների վիճակի գնա-հատում: Հավաքված հողի և բույսերի մոտ 25 նմուշների	30.06.15	

		տարածքների կենսաերկրաքիմիական մոնիթորինգ և բույսերի վիճակի գնահատում:	բույսերի վիճակի և կայունության գնահատում, որոշել աճի և զարգացման փուլերը:	առկայություն՝ հիմնական աղտոտիչների պարունակության որոշմամբ, 150 տարրալուծման աշխատանքների իրականացում:		
			III.3. Իրականացնել հետազոտվող տեղամասերի կենսաերկրաքիմիական գնահատում՝ նմուշառել հողը և հիմնական ծառատեսակների տերևները, իրականացնել նմուշների քիմիական տարրալուծում:	III. 3. Հետազոտված տեղամասերի կենսաերկրաքիմիական գնահատում, Երևան քաղաքի կանաչ գոտիներում աճող ծառատեսակների վիճակի և էկոլոգիական կայունության վերաբերյալ տվյալների բազայի համալրում:	30.09.15	
			III.4. Ուսումնասիրել ծառատեսակների մետաղակլանիչ հատկությունները և փոշեկայունությունը, նյութափոխանակության առանձնահատկությունները քաղաքային պայմաններում, կատարել ստացված տվյալների վերլուծություն: Հաշվետվության կազմում:	III.4. Ստացված տվյալների հիման վրա պատրաստված գիտական հոդվածի ձևակերպում:	31.12.15	
IV	Քաղաքակենտրոնացված տարածք-ներում աճեցվող բուսական ծագման սննդամթերքի էկոլոգիական անվտանգության գնահատում	Քաղաքակենտրոնացված տարածքներում աճեցվող բուսական ծագման սննդամթերքը գտնվում է հզոր տեխնածին ազդեցության տակ, սակայն ելնելով ծանր սոցիալ տնտեսական իրավիճակից բնակչության զգալի մասը շարունակում է մշակել աղտոտված հողերը և օգտվել այդտեղ աճեցվող պտուղ-բանջարեղենից: Վերջինները հաճախ պարունակում են մեծ քանակությամբ տարբեր վնասակար նյութեր, որոնք կարող են բնակչության առողջությանը սպառնացող ռիսկի գործոն հանդիսանալ:	IV.1.Իրականացնել նախորդ տարիներին ստացված տվյալների համեմատական վերլուծություն, համալրել տվյալների բազան, նախապատրաստվել դաշտային աշխատանքներին, ուսումնասիրել տարբեր երկրների գիտնականների իրականացված հետազոտությունները տվյալ ուղղությամբ:	IV.1. Տվյալների բազայի համալրում, -2015 թ-ին հետազոտվող, տարածքների ընտրություն, տպագրության համար նախատեսված գիտական հոդվածի ձևակերպում	31.03.15	4554250
			IV.2.Շարունակել Երևան քաղաքի տարածքում աճեցվող պտուղ-բանջարեղենի էկոլոգիական անվտանգության ուղղությամբ հետազոտությունները: Ուսումնասիրել նախորդ տարիներին քաղաքի տարբեր մասերում աճեցվող պտուղ-բանջարեղենի հիմնական տեսակների աղտոտվածությունը քիմիական աղտոտիչներով՝ ծանր մետաղներով, հալոգենների միացություններով, պեստիցիդներով:	IV.2. Հետազոտվող տեղամասի բույսերի տեսականու ընտրություն և նշված տեսակների վիճակի գնահատում: Հավաքված հողի և բույսերի մոտ 25 նմուշների առկայություն՝ հիմնական աղտոտիչների պարունակության որոշմամբ, 150 տարրալուծման աշխատանքների իրականացում:	30.06.15	

			IV.3.Իրականացնել հետազոտվող տեղամասերի կենսաերկրաքիմիական գնահատում՝ նմուշառել հողը և հիմնական բուսատեսակների պտուղները, իրականացնել նմուշների նախնական մշակում և քիմիական տարրալուծում:	IV. 3Հետազոտված տեղամասերի կենսաերկրաքիմիական գնահատում, Երևան քաղաքի կանաչ գոտիներում աճող ծառատեսակների վիճակի և էկոլոգիական կայունության վերաբերյալ տվյալների բազայի համալրում:	30.09.15	
			IV. 4. Հետազոտել գյուղատնտեսական բույսերի տեսակների վնասակար նյութեր կլանելու առանձնահատկությունները և աղտոտման մակարդակը, տոքսիկանտների ազդեցությունը բույսերի աճի, զարգացման և բերքատվության վրա, կատարել ստացված տվյալների վերլուծություն, որոշել էկոլոգիական անվտանգության ռիսկի մակարդակը:Կազմել հաշվետվություն:	IV.4. Ստացված տվյալների հիման վրա պատրաստված գիտական հոդվածի ձևակերպում:	31.12.15	
V	Լանդշաֆտային պլանավորման և լանդշաֆտային կայունության գնահատման գիտամեթոդական հիմունքների մշակում և շրջակա միջավայրի աղտոտման հեռազննման մոնիթորինգային համակարգի ստեղծում:	Լանդշաֆտների էկոլոգիական իրավիճակի մոնիթորինգային համակարգի ձևավորման անհրաժեշտությունից ելնելով նախատեսվում է շարունակել լանդշաֆտային պլանավորման և լանդշաֆտային կայունության գնահատման գիտամեթոդական հիմունքների մշակման և շրջակա միջավայրի աղտոտման հեռազննման մոնիթորինգային համակարգի ստեղծման ուղղությամբ աշխատանքները:	V.1. Մշակել գյուղատնտեսական հողահանդակներում էրոզիոն պրոցեսների ձևավորման, զարգացման և վտանգավորության աստիճանի, ինչպես նաև լեռնային արոտավայրերի էներգետիկ պոտենցիալի գնահատման հեռազննման մեթոդներ: Մասնավորապես նախատեսվում է տիեզերական նկարների, աերոլուսանկարահանման և բիոքիմիական տվյալների համադրմամբ մշակել էրոզիոն օջախների ձևավորման և արոտավայրերի բուսականության կալորիականության վերծանման հայտանիշներ:	V.1.Լեռնային արոտավայրերի էներգետիկ կալորիականության գնահատման և էրոզիոն պրոցեսների ձևավորման, զարգացման և վտանգավորության աստիճանի գնահատման հեռազննման մեթոդների համակարգ:	31.03.15	20348196
			V.2.Շարունակել լանդշաֆտային առանձին բաղադրիչների (հող, բույս) աղտոտման գնահատման հեռազննման մեթոդների մշակման աշխատանքները:	V.2.Հողերի և մի շարք բույսերի ծանր մետաղներով աղտոտման սպեկտրալ առանձնահատկությունների փոփոխությունների օրինաչափությունների բացահայտում:	30.06.15	

			V.3.Շարունակել բազային և թեմատիկ տարածական տեղեկատվական բազաների, էկոլոգիական տեղեկատվական գեոորպալի թարմացման և էկոլոգիական նշանակության տեղեկատվության (հողօգտագործման տվյալներ, հողային քարտեզներ և այլն) միջազգային ստանդարտավորման աշխատանքները: Ստանդարտավորված տարածական տեղեկատվության հիման վրա նախատեսվում է քաղաքային լանդշաֆտների էկոլոգիական իրավիճակի գնահատման միջազգային մոդելների գործարկում և ստուգում (калибрация):	V.3.Էկոլոգիական նշանակության միջազգայնորեն ստանդարտավորված տարածական տվյալների և դրանց մետատվյալների տարածական-վերլուծական և գիտամեթոդական համակարգի թարմացում:	30.09.15	
			V.4.Արդյուքների ամփոփում, հաշվետվության կազմում	V.4.Գիտական հոդվածների մշակում:	31.12.15	
VI	Սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվավերլուծական կենտրոն 1.Լեռնահանքային շրջաններում աճեցված պտուղ- բանջարեղենի ռիսկի գնահատում: 2. Երևան քաղաքի շուկաներում ռիսկի գնահատում և ազգաբնակչության էքսպոզիցիայի գնահատում՝ բուսական ծագման մթերքներում քիմիական ծագման թունանյութերի մնացորդներից: 3. Պարենամթերքի կեղծումների ռիսկի	VI. 1.Լեռնահանքային շրջաններում աճեցված պտուղ-բանջարեղենում թունավոր տարրերի պարունակության, ինչպես նաև սպառման տվյալների համադրմամբ՝ օրական ընդունվող քանակների հաշվարկ և վերջինիս հիման վրա առողջության ռիսկի հետազոտություն: VI.2. Երևան քաղաքի շուկաներում շրջայցերի իրականացում, արտադրական ռիսկի գնահատման ուղեցույցի համաձայն տաղավարների գնահատում: Բարձր ռիսկային տաղավարներից հսկիչ գնում և փորձաքննության իրականացում: Իրականցվելու են համալիր աշխատանքներ մթերքների	VI.1.1 Լեռնահանքային շրջաններում աճեցված պտուղ-բանջարեղենի աղտոտման տվյալների բազայի ստեղծում՝ ըստ առողջության ռիսկի հաշվարկման պահանջների:	VI.1.1 Թվայնացված տվյալների բազայի ստեղծում	31.03.2015	16096533
			VI.1.2 Լեռնահանքային շրջաններում բնակվող ազգաբնակչության ռիսկի քանակական հաշվարկ: Արդյունքների համեմատություն անվտանգության միջազգային չափորոշիչների հետ և գիտական հիմնավորում:	VI.1.2Արդյունքները կամփոփվեն հոդվածի և համառոտ հաշվետվության տեսքով:	30.06.2015	
			VI.2.1.Երևան քաղաքի շուկաներում իրացման կետերի տեսակավորում՝ ըստ ռիսկայնության: Արդյունքների գիտական հիմնավորում և ռիսկի նվազեցման միջոցառումների մշակում:	VI.2.1.Արդյունքները կամփոփվեն հոդվածի տեսքով:	30.09.15	
			VI.2.2. Միջազգային չափորոշիչների համապատասխան սննդի սպառման հարցաթերթի մշակում և արդյունքների գիտական ամփոփում:	VI.2.2. Երևան ք. Ազգաբնակչության շրջանում բուսական ծագման մթերքների սպառման տվյալների բազայի ստեղծում:		

	գնահատում:	սպառման տվյալների բազայի ստեղծման և ռիսկի մատրիցաների համալիր հետազոտման ուղղությամբ: VI.3. Շուկայի հետազոտություն, հսկիչ գնում և փորձաքննության իրականացում:	VI.3.1. Արդյունքների ամփոփում և գիտական հիմնավորում: Պարենամթերքի կեղծումների հայտնաբերման և պատշաճ վերահսկողության մեխանիզմների մշակում:	VI.3.1. Արդյունքների ամփոփում գիտական հոդվածի տեսքով:	31.12.15	
VII	ՅՈՒՆԵՍԿՕ-ի "Կրթություն հանուն կայուն զարգացման" ամբիոն VII.1.Ուսումնամեթոդական ենթակառույցի զարգացում VII.2.Մասնագետների պատրաստում և վերապատրաստում /թրեյնինգներ/ 3.Հանդիպումների, սեմինարների, գիտաժողովների, փառատոնների կազմակերպում 4.Միջազգային գիտակրթական համագործակցության ապահովում կայուն զարգացման ոլորտում	VII. 1.1.Բնապահպանական կրթությանը (ԲԿ) և կայուն զարգացման կրթությանը (ԿԶԿ) վերաբերող ՀՀ օրենսդրության և քաղաքականության ուսումնասիրություն և իրավիճակային վերլուծություն: VII. 1.2. Նախագծային տեխնոլոգիայի վերաբերյալ նյութերի հավաքագրում, մշակում և կազմում: VII. 2.1 "Բնապահպանություն և բնօգտագործում" մասնագիտությամբ մագիստրանտներին կրթական ինտերակտիվ մեթոդների հետ ծանոթացում: VII. 2.2Սեմինար վարժանքների կազմակերպում և մասնակցություն: VII.3.1 UNESCO-ի 10 բազային դպրոցներում "Ուսուցում հանուն ապագայի" ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումներին	VII.1.1Բնապահպանական կրթությանը (ԲԿ) և կայուն զարգացման կրթությանը (ԿԶԿ) վերաբերող ՀՀ օրենսդրության և քաղաքականության վերլուծություն: VII.1.2 Ձեռնարկի ստեղծում՝ նյութերի վերանայում և խմբագրում:	VII.1.1Առաջարկությունների ներկայացում: VII.1.2 Հոդվածների հրատարակում: Նախագծային տեխնոլոգիայի վերաբերյալ ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակում	30.06.2015	4568701
			2.1.ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի "Բնապահպանություն և բնօգտագործում" մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագրերով ուսուցման կազմակերպման աջակցություն: 2.2 ՀՀ գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ սեմինար-վարժանքների կազմակերպման աջակցություն:	2.1.Ինտերակտիվ մեթոդներով մագիստրոսական կրթություն ստացած մագիստրոսներ (2-րդ կուրս): 2.2 Դասընթացներ, տեղեկատվական փաթեթներ, վերապատրաստված թիրախային խմբեր:	30.06.2015	
			3.1 UNESCO-ի 10 դպրոցներում "Սևանա լճի էկոխնդիրները", "Սասնա ծռեր" թեմատիկ ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումներին մասնակցության ապահովում 3.2. Քեմբրիջ- 2015թ. գիտափառատոնին մասնակցություն 3.3 "Շրջակա միջավայրի աղտոտվածությունը ծանր մետաղներով" թեմատիկ ծրագրի իրականացում Երևանի թիվ 198 ավագ դպրոցի աշակերտների հետ: 3.4.Ժյուրիի կազմում ընդգրկվածություն և թեմատիկ զեկույցների ներկայացում:	3.1 Սկայպ հանդիպումներ, գիտական փորձեր, ռեֆերատներ 3.2 Պրեզենտացիաներ, 3.3 Սովորողների մոտ գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացում ծանր մետաղներով շրջակա միջավայրի աղտոտվածության վերաբերյալ 3.4 Շրջակա միջավայրի	30.09.15	

		ծանոթացում, իրականացում և շարունակականության ապահովում: VII.3.2 Քեմբրիջի 2015թ. գիտափառատոնին դպրոցների մասնակցության ապահովում VII.3.3 Գիտագործնական պարապմունքների անցկացում էկոկենտրոնի լաբորատորիաներում VII.3.4Մխիթար Մեբաստացի կրթահամալիրի ամենամյա Էկոտուր ստուգատեսմրցույթի անցկացման մասնակցություն 4.1Միջազգային կազմակերպություն ների, ՀԿ-ների, դպրոցների կողմից իրականացվող բնապահպանական ծրագրերի բազաների ստեղծում և պարբերաբար լրամշակում: 4.2 UNESCO-ի ամբիոնների փորձի ուսումնասիրություն		հիմնախնդիրների վերաբերյալ սովորողների մոտ գիտելիքների, հմտությունների ձևավորում:		
			4.1 Մասնակցություն Բնապահպանական կրթության ցանցի (ԲԿՑ) ամենամսյա հանդիպումներին 4.2 Միջազգային գիտակրթական ոլորտին ինտեգրվելու նպատակով տեղական և արտերկրյա UNESCO-ի ամբիոնների հետ համագործակցության եզրերի հաստատում: Տարածաշրջանային մակարդակով տեղեկատվության փոխանակում՝ օգտագործելով տարբեր էլեկտրոնային ցանցեր. UNITWIN Networks, Copernicus Alliance, ENSI, Info CENN և այլն:	4.1 Փոխշահավետ համագործակցական կապերի ստեղծում վերոհիշյալ կազմակերպություն ների հետ: Բնապահպանական ծրագրերի բազաների ստեղծում 4.2 Փոխշահավետ կապերի ստեղծում, հնարավոր հանդիպումներ, ծրագրեր	31.12.15	
Ընդամենը						99085800

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

ՌՈՒԲԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

(ստորագրություն)

ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն

Տնօրեն Ա. Սաղաթելյան

(ստորագրություն)

Հավելված 3
«27» 01 2015թ.
N Ա-19 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնություն

Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի

«Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ»

(ծրագրի անվանումը)

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Նախագահություն-ը ի դեմս նախագահ Ռադիկ Մարտիրոսյան-ի և ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն Արմեն Սաղաթելյան -ի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «27» 01 2015թ. N Ա-19 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ 99085,8 հազար ՀՀ դրամ (իննսունինը միլիոն ութսունհինգ հազար ութ հարյուր ՀՀ դրամ) գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա	ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ
	ք. Երևան, Աբովյան 68
Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100	Անելիք բանկ Կենտրոնական մ/ճ
ՀՎՀՀ 00005673	Հ/հ 11805100241800
	ՀՎՀՀ 01506627
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան	Տնօրեն՝ Ա.Սաղաթելյան
(ստորագրության)	(ստորագրության)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4

«27» 01 2015 թ.

N 21-19 պայմանագրի

Գիտական ծրագրի նախահաշիվ

NN ը/կ	ծախսերի հոդվածների անվանումը	ընդամենը (հազար դրամ)	այդ թվում			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	աշխատավարձ և եկամտային հարկ	82043,0	16408, 7	20510,7	20510,7	24612,9
2	տնտեսական և այլ ծախսեր	17042,8	3408,6	4260,7	4260,7	5112,8
3	ընդամենը	**99085,8**	**19817,3**	**24771,4**	**24771,4**	**29725,7**

Տնօրեն՝ _____ (Արմեն Սաղաթելյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Գլխավոր հաշվապահ՝ _____ (Տարուշ Իսահակյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կ.Տ.